ԱԴՐԲԵՋԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տարածքը՝ 74,6 հազ. կմ^2
Բնակչությունը՝9,3 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Բաքու
Պետական կարգը՝ նախագահական հանրապետություն

Ադրբեջանի ներկայիս տարածքը բնակեցված է եղել հին քարե դարից սկսած: Այդ են վկայում այստեղից պեղված նյութերը, որոնք էլ ապացուցում են այդ վայրերի բնիկների զարգացած մշակույթի մասին: Հույն պատմիչ Ստրաբոնի վկայությամբ, անտիկ շրջանում այսեղ բնակվում էին աղվանական շուրջ երեք տասնյակ ցեղեր, որոնք Ք. ա. մոտ 1-ին դարում ստեղծեցին միացյալ թագավորություն (Աղվանք), որը դաշնակցում էր Մեծ Հայքի հետ: Միջնադարում այս տարածքը հաջորդաբար նվաճել են արաբները, սելջուկ թուրքերը, թաթար-մոնղոլները, թուրքմենական օղուզ ցեղերը: Ադրբեջանի տարածքում ներկայումս բնակվող ժողովրդի ձևավորումն ընթացել է տեղաբնիկ, ինչպես նաև եկվոր թուրքալեզու և իրանալեզու տարրերի համախմբման պայմաններում, դրանց կրոնամշակութային ընդհանրություններին հիման վրա:

Սահմանադրության համաձայն Ադրբեջանը նախագահական հանրապետություն է: Նախագահն օժտված է մեծ լիազորություններով: Նախարարների կաբինետը գլխավորում է վարչապետը: Օրենսդիր բարձրագույն մարմինը խորհրդարանն է՝ Միլի Մեջլիսը:

Ադրբեջանը լեռնային երկիր է: Նրա հյուսիսում Մեծ Կովկասի լեռներն են, հարավում՝ Փոքր Կովկասի: Ծայր հարավ արևելքում ձգվում են Թալիշի լեռները: Լեռների միջև ընկած են Կուր-Արաքսյան և Լենքորանի դաշտավայրերը: Նախիջևանի հյուսիսում Զանգեզուրի լեռներն են, որոնց ստորոտից մինչև Արաքս տարածվում է Նախիջևանի ընդարձակ հարթավայրը, որը Արարատյան դաշտի շարունակությունն է:

Լեռնային շրջաններում հաճախակի են երկրաշարժերը: Կասպից ծովի մակարդակի բարձրացման պատճառով աստիճանաբար ջրածածկ է լինում Կուր-Արաքսյան դաշտավայրի ցածրադիր հատվածը:

Ադրբեջանն ամբողջությամբ գտնվում է մերձարևադարձային գոտու հյուսիսային մասում: Աչքի է ընկնում արևոտ, չոր կլիմայով: Դա բնորոշ է հատկապես Կուր-Արաքսյան դաշտավայրին: Այստեղ տիրապետում են կիսաանապատներն ու անապատները, որոնք ոռոգման շնորհիվ օգտագործվում են գյուղատնտեսության արժեքավոր բույսերի մշակման համար:

Լենքորանի դաշտավայրի և Թալիշի նախալեռների կլիման խոնավ մերձարևադարձային է. մթնոլորտային տեղումների տարեկան քանակն այստեղ հասնում է մինչև 1700 մմ-ի: Այդ պայմանները նպաստավոր են թեյի և ցիտրուսների մշակության համար:

Մինգեչաուրի ջրամբարի առափնյա հատված

Երկրի նախալեռների ու լեռների մարգագետինները ծառայում են որպես ամառային արոտավայրեր, իսկ ցածրադիր չոր տափաստաններն ու կիսաանապատները՝ որպես ձմեռային արոտավայրեր:

Ադրբեջանի խոշոր գետերն են Կուրը և Արաքսը: Նրանց ջրերն օգտագործվում են ոռոգման և էլեկտրաէներգիա ստանալու համար: Կուրը Եվլախ բնակավայրից մինչև Կասպից ծովը նավարկելի է փոքր տարողության նավերի համար: Գետի վրա կառուցվել է Մինգեչաուրի խոշոր ջրամբարը:

Վիթխարի է Կասպից ծովի տնտեսական նշանակությունը Ադրբեջանի համար: Կասպիական ջրերը պարունակում են միլիոնավոր տոննա տարբեր աղեր, հատակում կան նավթի և բնական գազի պաշարներ: Վերջինս լուրջ տարաձայնությունների պատճառ է դարձել ավազանի երկրների միջև՝ ծովի հատակի բաժանման հարցում, քանզի ի տարբերություն Համաշխարհային օվկիանոսի, լճերի ջրային տարածքի և հատակի ընդերքի հարստությունների օգտագործումը կարգավորող միջազգայնորեն ընդունված օրինական կանոններ դեռ մշակված չեն:

Կասպից ծովը հարուստ է արժեքավոր ձկնատեսակներով (սաղմոն, թառափ): Այդ լճին բաժին է ընկնում թառափի համաշխարհային որսի ավելի քան 80 %-ը:

Նրա տաք և ավազոտ լողափերը մեծ թվով հանգստացողների են ձգում:

Կասպից ծովը նաև էժան տրանսպորտային հաղորդակցության միջավայր է և միավորում է ավազանի 5 պետություններին:

Ադրբեջանի ընդերքը հարուստ է **օգտակար հանածոներով**, հատկապես նավթով և բնական գազով: Ցամաքից բացի (Ապշերոնյան թերակղզի), դրանց շատ հարուստ պաշարներ հայտնաբերված են նաև Կասպից ծովի հատակում: Ձգալի են նաև երկաթի հանքաքարի (Դաշքեսան), ալյումինի հումքի՝ալունիտի (Գյանջայի և Նախիջևանի մոտ), մոլիբդենի, քարաղի (Նախիջան) պաշարները:

Փոքր Կովկասի հյուսիսարևելյան ստորոտներում հայտնաբերվել է բուժիչ մածուցիկ նավթի հանքավայր, որը հանդիպում է միայն Ադրբեջանում և որի հիման վրա գործում է Նավթալան առողջավայրը:

Շատ են հանքային աղբյուրները:

Ադրբեջանի բնական ռեկրեացիոն բազմազան ռեսուրսները որոշակի հնարավորություն են ստեղծում հանգստի ու զբոսաշրջության զարգացման համար:

Բաքուն եղել է Հարավային Կովկասի հայերի հասարակական-քաղաքական և մշակութային կենտրոններից մեկը: Հայ ճարտարապետներն ու շինարարները գործուն մասնակցություն են ունեցել Բաքվի կառուցապատմանը: Նրանց կառուցած բնակելի տները, հասարակական ու մշակութային շինությունները կանգուն են մինչև օրս և զարդարում են Ադրբեջանի մայրաքաղաքը:

Վերջին տասնամյակներում կտրուկ նվազել է նաև ազգային մյուս փոքրամասնությունների թիվը: Այդ ամենի արդյունքում Ադրբեջանը դարձել է միատարր երկիր: Ներկայումս բնակչության 91 %-ը ադրբեջանցիներ են, 2-ական %՝ լեզգիներ, ռուսներ:

Ադրբեջաներենը պատկանում է ալթայան լեզվաընտանիքի թյուրքական լեզվախմբին: Տիրապետող կրոնը մահմեդականությունն է: Բնակչության 93 %-ը դավանում է այդ կրոնը:

Բնակչության բնական աճը բարձր է՝ 1,2 %:

Երկրում բնակչությունը խիստ անհավասարաչափ է բաշխված: Խտաբնակ են Ապշերոնյան թերակղզին, Կուր-Արաքսյան և Լենքորանի դաշտավայրերը:

Ուրբանիզացման մակարդակով Ադրբեջանը միջին տեղ է գրավում աշխարհում (52 %): Այդ ցուցանիշով Ադրբեջանը զիջում է Հայաստանին: Խոշոր քաղաքներն են Բաքուն (մոտ 2մլն բնակիչ), Գյանջան, Սումգայիթը, Մինգեչաուրը:

Արդյունաբերությունը շարունակում է մնալ Ադրբեջանի տնտեսության առաջատար ճյուղը: Արդյունաբերության առաջատար ճյուղը նավթի հանույթն ու վերամշակումն է: Ադրբեջանը նավթի ու գազի հանույթի հնագույն շրջաններից մեկն է աշխարհում: 1913թ. Բաքուն տալիս էր Ռուսաստանի արդյունահանվող նավթի 7/10-ը: Ներկայումս նավթի տարեկան հանույթը կազմում է 10-12 մլն տ: Նավթի մի մասը մշակվում է Բաքվում, մյուս մասը արտահանվում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղով: Բնական գազի տարեկան հանույթը (5 մլրդ մ^3) չի բավարարում երկրի պահանջը, որի պատճառով գրեթե նույնքան էլ ներմուծվում է:

Նավթի հանույթը Ապշերոնի ծանծաղուտում

Ադրբեջանի նավթագազաքիմիական համալիրի վրա է հենվում էներգետիկ տնտեսությունը: Էլեկտրաէներգիայի մոտ 90 %-ը տալիս են ՋԷԿ-երը:

Մետաղաձուլությունը զարգացած է Սումգայիթում, որտեղ արտադրում են խողովակներ՝ նավթարդյունաբերության համար: Այստեղ գործում է նաև ալյումինի ձուլման գործարան:

Մեքենաշինության ձեռնարկությունները հիմնականում արտադրում են նավթարդյունաբերությանն անհրաժեշտ սարքավորումներ (Բաքվում, Սումգայիթում): Գյանջայում կազմակերպվում է ավտոմոբիլների արտադրություն:

Ադրբեջանի քիմիական արդյունաբերությունը մտնում է նավթագազաքիմիական համալիրի մեջ: Առաջին հերթին դրանք նավթ և գազ վերամշակող գործարաններ են, որոնք կենտրոնացած են Բաքվի շուրջ: Ճյուղը թողարկում է սինթետիկ կաուչուկ, ավտոդողեր, պլաստմասսա, պարարտանյութեր, թունաքիմիկատներ, դեղորայք, ներկեր, լաքեր:

Բաքվից բացի խոշոր կենտրոններ են Սումգայիթը, Գյանջան, Մինգեչաուրը:

Ադրբեջանի թեթև արդյունաբերության ճյուղերից զարգացած են հատկապես մետաքսագործությունն ու գորգագործությունը:

Սննդի արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են մրգերի, բանջարեղենի և ձկան պահածոներ, ձկնկիթ, գինիներ, որոնց մեծ մասն արտահանվում է:

Վրաստանի և Հայաստանի համեմատությամբ Ադրբեջանն ունի **գյուղատնտեսության** զարգացման ավելի նպաստավոր պայմաններ. ավելի ընդարձակ են հարթավայրային տարածքները, բարենպաստ են բնակլիմայական, հատկապես՝ ջերմային պայմանները, Կուր և Արաքս գետերի ոռոգչական զգալի հնարավորությունները: Այդ ամենը թույլ են տալիս զբաղվելու մերձարևադարձային բուսաբուծությամբ:

Ադրբեջանի համար բնորոշ է նաև ամառային և ձմեռային ընդարձակ արոտավայրերի առկայությունը, ինչը հնարավորություն է տալիս կենդանիներին էժան կերով ապահովել ամբողջ տարին:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է, որտեղ առաջատար դեր ունի բամբակագործությունը: Դրանով հիմնականում զբաղվում են Կուր-Արաքսյան դաշտավայրում և Նախիջևանում:

Խոնավ մերձարևադարձային կլիմայի շնորհիվ Լենքորանը մասնագիտացել է թեյի, բրնձի և ցիտրուսների մշակությամբ: Ծխախոտի մշակության հիմնական շրջանները Մեծ և Փոքր Կովկասի ստորին լեռնալանջերն են: Մեծ Կովկասի նախալեռնային շրջաններում լայն տարածում ունի խաղողագործությունը և պտղաբուծությունը (նուռ, նուշ, թուզ, սերկևիլ, ձիթապտուղ):

Թեյի մշակությունը Լենքորանում

Հացահատիկային գլխավոր մշակաբույսը աշնանացան ցորենն է: Նրա ցանքատարածությունները մեծ մասամբ Կուր-Արաքսյան դաշտավայրում են:

Ադրբեջանի **անասնապահությունը** զարգացած է ընդարձակ արոտավայրերի շնորհիվ: Սակայն այն կրում է էքստենսիվ բնույթ: Անասնապահության գլխավոր ճյուղը ոչխարաբուծությունն է, որը տարածված է ամենուրեք: Խոշոր եղջերավոր անասուններ բուծում են գլխավորապես զարգացած դաշտավարության շրջաններում:

Մի շարք շրջաններում տարածված է շերամապահությունը, որը հումք է մատակարարում մետաքսագործությանը:

Ապշերոնյան թերակղզում կան ձկնաբուծարաններ, որտեղ գլխավորապես բուծում են թառափ՝ սև ձկնկիթ ստանալու համար:

Ադրբեջանում առկա են ժամանակակից **տրանսպորտի** բոլոր տեսակները: Գլխավորը երկաթուղային տրանսպորտն է, որը միմյանց է կապում երկրի բոլոր տնտեսական խոշոր կենտրոնները և սպասարկում է արտաքին կապերը: Սակայն ՀՀ-ին և ԼՂՀ-ին շրջափակելու նպատակով ադրբեջանական երկաթուղու որոշ հատվածներ, այդ թվում նաև Նախիջևանի հետ կապող հատվածը, երկար ժամանակ է ինչ չի գործում:

Իր նշանակությամբ երկրորդը Կասպից ծովի ջրային տրանսպորտն է, որի աշխատանքում գլխավորը բեռների արտաքին փոխադրումներն են: Բաքուն Կասպից ծովի խոշորագույն նավահանգիստն է: Բաքվի և Կասպից ծովի արևելյան ափին գտնվող թուրքմենական Թուրքմենբաշի նավահանգիստի միջև գործում է նաև լաստանավային հաղորդակցություն:

Ադրբեջանական ծովային 4 նավ էլ լողում է համաշխարհային օվկիանոսում: Դրանցից 2-ը գրանցված է Վրաստանի, 2-ը՝ Մալթայի նավահանգիստներում:

Երկրում գնալով ավելի է զարգանում մանևրունակ ավտոմոբիլային տրանսպորտը: Նրա դերը մեծ է ներքին բեռնափոխադրումներում և հատկապես լեռնային շրջաններով կատարվող ուղևորա- և բեռնափոխադրումներում:

Մեծ զարգացում է ստացել խողովակաշարային տրանսպորտը:

Հետխորհրդային շրջանում զգալի փոփոխություններ են կրել Ադրբեջանի **արտաքին տնտեսական կապերը**: Խիստ նվազել են կապերը նախկին խորհրդային հանրապետությունների հետ: Դրան հակառակ աճել են կապերը Թուրքիայի, Իրանի, Գերմանիայի, Իտալիայի և Իսրայելի հետ:

Արտահանման գերակշիռ մասը (90 %) բաժին է ընկնում նավթին և նավթամթերքին: Արտահանում է նաև բամբակի մանրաթել, պարենամթերք, մեքենասարքավորում:

Ներմուծման մեջ գերակշռում են ժամանակակից տեխնոլոգիաներ, մեքենաները, սննդամթերքը և հումքը:

Առևտրական գլխավոր գործընկերներն են Թուրքիան, Ռուսաստանը, Իրանը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան:

Ադրբեջանն անդամակցում և սերտ կապեր է պահպանում միջազգային մի շարք կազմակերպությունների հետ (Սևծովյան տնտեսական համագործակցություն, Իսլամական համաժողով, Կասպից ծովի ավազանի երկրների և այլն):